զազն, քանզի Ֆռանգ բազում եկեալ են անդ նաւով։

Եւ առաւօտուս Կիրակի Մեծահրաշի (18 Մայիս) գնացաք ի Սուրբ Նիկողոս եւ յետ ժամուն գնացի ի մեր ժամն եւ անտի ի Մղսոնցն եւ Մղտեսին ի Ղալաթայ գնաց զսանն կնքել եւ եկաւ Գ ժամուս, եւ Երեկոյիս գնացաք ի Սուրբ Նիկողոս և դաս ասաց Վարդապետն և ի մէջ դասին անիծեաց և նզովեաց զորդի Պիլէզիկճի Ցարութիւնին որ օրս գնացեալ ի Ղալաթայ և ի ձեռաց Ֆռանկացն հաղորդ է առեալ։ Եւ յետ ժամին զԱմբիծքն ասին, և յետ արձակմանն գնացաք ընդ Մղտեսուն ի տուն նորա և անտի գնացի ես ի տուն։

Բշի (19 Մայիս) առաւօտուս գնացի ի ժամ և անտի ի խանութ։ Եւ յերէկ և այսօր ի ներսն մուշավէրէ կայր խորհրդեամբ յէնկիչէրոցն, քանզի լուեալ թէ Սէյտի Ահմատ փաշան եւ Հասան աղայ Իփշիրին եւ այլ մեծամեծք յըսպահոցն ամենեքեան գնացեալ մօտ ի վէզիրն, և սոքա երկուցեալ յայսմ բանէս՝ գուցէ նոքա մեզ զան[1]) տայցեն, վասն այսորիկ մուշավէրէ առին և կամին զի զմօհրն դարձուցեն ասա. և կարծեմ թէ չը կարեն առնել զգործս։ Եւ երեկոյիս գնացի մօտ ի Վարդապետն եւ զայսոսիկ լուեալ ոչ գնաց ի ժամ վասն տրտմութեանն, քանզի ոչ եղև մի խաղաղութիւն որ տեսանէին զգործս Երուսաղէմայ։

Գշի (20 Մայիս) առաւօտուս գնացի ի ժամ և անտի ի խանութ։ Եւ լաք՝ թէ ի գնտանն որչափ մարդ արգիլեալ էին չարագործք և գողք, զոմանս տարեալ ի թին տուեալ, եւ զղափուտանի բերած հայտուտ աւազակքն ևս՝ զնոքա ի թին տուեալ։ Եւ յետ կէս աւուրս թագաւորն թէպտիլ կերպարանաւ եկեալ ի Պահչաղափուսին եւ գնացեալ սակաւիկ մի յառաջ ընդ ծովու եզերովն եւ զմի մարդու չինիքն զրկել վասն

1) գուն.